

Յաջորդ առառուն բաւական է 500 կրամ հասարակ ջուրով գրեխում մը ընել, նախապէս տրուած սննդական գրեխումին միացորդները հանելու համար:

Սննդական գրեխումներու մէջ գործածուած հեղուկին քանակը ո՛րքան յիշ ըլլայ՝ ա՛յնքան գիւրին է առնելն ու աղիքին մէջ պահելը: Լայնալիին լուացումը կը կատարուի հասարակ գրեխումի գործածութեան նման, միայն թէ հոս 37 աստիճան տաք 2 լիթր եռացած ջուր կը գործածուի. իսկ գործիքը կը գրուի 80 հարիւրորդամեթր բարձրութեան վրայ: Պարզ մուծակին տեղ կ'անցընեն քսուչուէ երկայն խողովակ մը (sonde) եւ ծորակը կը բանան այն առնէն միայն երբ 10 հարիւրորդամեթր ներս մտած է. որքան որ ջուրը ներս երթայ՝ ա՛յնքան ներս մղելու է խողովակը: Այս լուացումը ընելու է բժիշկին յանձնարարութեամբ միայն:

Այս գործողութիւնը խիստ զանգազ կատարելու է, ծորակը կէս մը բանալով, եւ ներսը պահելով 20 վայրկեան:

Հաւաքեց՝ Կ. Յ. ԲԱՍՄԱՋԵԱՆ

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

ՔՈՒԹԷՇ (Սկարլատին), Գրեց՝ ԲԺ. Ա. ՄԵԼԻՔԵԱՆ, (Պետական Հրատարակութիւն, Երեւան 1929)

Փոքրիկ 21 երեսնոց գրքոյկի մը մէջ հեղինակը յաջողել է պարզ, դիւրամօրոնելի եւ ժողովրդական լեզուով մը ոչ միայն տալ քուէշին բոլոր յատկանիշերը, ընթացքը եւ բարդութիւններուն նկարագրութիւնը, այլեւ անոր դեռ չգտնուած բայց ենթադրական մանրէին, անոր տարածման, ինչպէս նաեւ պաշտպանութիւն միջոցներուն մասին ամփոփ տեղեկութիւններ: Քուէշը ըլլալով դպրոցական տարիքներու հիւանդութիւն մը, հեղինակը մասնաւորապէս շեշտած է նոյնպէս ոչ թէ միայն անհատական աշխատանքի հաւաքական եւ մասնաւորապէս դպրոցական առողջապահութեան վերաբերեալ անհրաժեշտ տուեալները:

Իր գրքոյկին նպատակը հեղինակը այսպէս կը ընորոշէ. «Սկարլատինի դէպքում պէտք է անպատճառ դիմել բժիշկին, նա կը պատուիրի ինչպէս պէտք է խնամել հիւանդին, հիւանդատները պէտք է կատարեն բժիշկի բոլոր պատուէրները: Բայց տարաբախտաբար ամէն տեղ էլ բժիշկ չկայ, բժիշկին հրաւիրելը շատ դժուար է: Հէնց այդ տեսակ տեղերում ապրողների համար էլ զբուլած է այս գրքոյկը. որ ամէնքը կարդան, իմանան. ինչպէս է լինում սկարլատինեան եւ ինչպէս պէտք է խնամել հիւանդին»:

Ուրախութեամբ կ'առնանագրենք որ հեղինակը յաջողած է լիովին իր նպատակին իրագործման մէջ, մանաւանդ եթէ նկատի առնենք որ գիրը միայն 8 կոպէկ է: Տպուած է 4000 օրինակ: Ցանկալի է որ այսպիսի առողջապահական հրատարակութիւնները տարածուէին մեր գաղութներուն մէջ:

ԲԺ. Ե. Մ.